

ՀՀ ԵՎ ՌԴ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ: ՄԱՀԱՊԱՏԻԺ

Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից զրկելով կամ սահմանափակելով:

Հարկ է նշել, որ պատժի վերոգրյալ սահմանումը նույնն է և Հայաստանի Հանրապետությունում, և Ռուսաստանի Դաշնությունում, սակայն փոքր ինչ տարբերվում են երկու պետությունների պատժատեսակները, մասնավորապես.

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ «Պատժի տեսակներն են՝ 1) տուգանքը, 2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, 3) հանրային աշխատանքները, 4) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, 4.1) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, 5) գույքի բռնագրավումը, 6) կալանքը, 7) կարգապահական գումարտակում պահելը, 8) ազատազրկումը որոշակի ժամկետով, 9) ցմահ ազատազրկումը»:

ՌԴ քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ «Պատժի տեսակներն են՝ 1) տուգանքը, 2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, 3) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, 4) պարտադիր աշխատանքներ, 5) ուղղիչ աշխատանքները, 6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, 7) ազատության սահմանափակումը, 8) հարկադիր աշխատանքները, 9) կալանք, 10) կարգապահական գումարտակում պահելը, 11) ազատազրկումը որոշակի ժամկետով, 12) ցմահ ազատազրկումը, 13) մահապատիժը»:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերով նախատեսված պատժատեսակների տարբերությունը մեծ չէ, սակայն ՌԴ քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակներից ուշադրության է արժանի մահապատիժը:

ՌԴ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Մահապատիժը, որպես պատժի բացառիկ տեսակ, կարող է նշանակվել միայն կյանքի դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործությունների համար»:

Չնայած այն հանգամանքին, որ ՌԴ օրենսդրությունը նախատեսել է մահապատիժը որպես պատժատեսակ, միևնույնն է այն չի կիրառվում: Այս հանգամանքը սերտորեն կապված է ՄԱԿ-ի վերջին բանաձևի հետ, համաձայն որի ողջ աշխարհում կասեցվել է մահապատժի կիրառումը: Մահապատժի կիրառման կասեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ընկալվում է որպես անմարդկային և մարդու արժանապատվությունը ոտնահարող երևույթ:

Միաժամանակ, ողջ աշխարհում կատարվող կյանքի դեմ ուղղված շատ հանցագործություններ չեն կարող անվանվել այլ կերպ, քան անմարդկային և լինում են շատ դեպքեր, երբ ամենաօբյեկտիվ պատիժը կարելի է համարել միայն մահապատիժը:

Սակայն, քանի դեռ քրեական գործերում առկա է մարդկային գործոնը՝ իր սխալներով և վրիպակներով հանդերձ, որը հաճախ բերում է դատական սխալի, ապա մահապատիժը չկիրառելը ճիշտ է: Պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ մահապատժի ենթարկված անձը հետագայում արդարացվել է:

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա ՀՀ քրեական օրենսգրքով մինչև 2003 թվականը մահապատիժը նախատեսված է եղել որպես պատժատեսակ: 2003 թվականի օգոստոսի 1-ից ՀՀ-ում վերացել է մահապատիժը: Նույն թվականին ՀՀ նախագահի կողմից ստորագրված հրամանագրով ներում է շնորհվել մահապատժի ենթարկված 44 դատապարտյալների, որոնց պատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

Ներկայումս մահապատիժը վերացրած երկրների թիվը հատել է հարյուրը, սակայն աշխարհի շատ երկրներ դեռ շարունակում են կիրառել այն:

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի անդամ
փաստաբան Կարեն Տոնոյան